

**ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՀՈՍՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ՍԿՍՎԱԾ Է**

07.12.2021 19:40



ՀՀ փաստաբանական դպրոցը **2021 թվականի դեկտեմբերի 3-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 23-ը ներառյալ** հայտարարում է 2022 թվականի գարնանային հոսքի ընդունելություն՝ քրեաիրավական և քաղաքացիաիրավական (վարչաիրավական) ուղղվածությամբ առկա (ստացիոնար), ինչպես նաև հեռավար (դիստանցիոն, առցանց) եղանակով ուսուցման համար (այդ թվում՝ հատուկ դիմորդների ընդունելություն):

Դիմումներն ընդունվում են առձեռն կամ էլեկտրոնային եղանակով (էլեկտրոնային դիմումը լրացնելու համար սեղմեք այստեղ), որի համար անհրաժեշտ է մուտք գործել [www.advschool.am](http://www.advschool.am) կայքէջի Ընդունելություն բաժնի Ձևաթղթեր ենթաբաժինը, լրացնել դիմումի ձևը և կցել անհրաժեշտ փաստաթղթերը: Դիմումը և կից փաստաթղթերը կարող եք հանձնել ՀՀ փաստաբանական դպրոցի աշխատակազմին՝ ք.Երևան, Զաքյան 7-3 հասցեով (3-րդ հարկ)՝ աշխատանքային օրերին՝ ժամը 10:00-ից մինչև ժամը 18:30-ը:

Ընդունելությանն առնչվող **տեղեկատվությունը** (անվճար և վճարովի տեղերի քանակը, ուսման վարձի չափը, ժամանակացույցը, քննության օրերը, դիմումի և ինքնակենսագրական թերթիկի ձևանմուշները, անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, իրավական ակտերը և այլն) **հասանելի է** ՀՀ փաստաբանական դպրոցի կայքէջի ([www.advschool.am](http://www.advschool.am)) «Ընդունելություն» բաժնում:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (010) 606-608 կամ (010) 606-609 կամ +374(98)65-56-01 հեռախոսահամարներով, գրել [info@advschool.am](mailto:info@advschool.am) էլ. հասցեին: